5 (87). ԹՐՎԵՋՅԻ ՄԵՐՍՈՊԸ

Զեյթունու մեջ մե Մերսոպ աղամ կար, ունիր քառասուն հատ դրվը, քառասուն հատ ա նեքըր։

Էդ մարթն օր հասակը առավ, մե մանչմ ա ունիր, նոր ուսում առած. մանչն օր նշանեց, կարքեց, ադ մարթը մահացավ, քառասուն դրվրն ու քառասուն նեքըրը մնաց մանչուն։ Մանչը լավ խանութըմ ունիր. առուտուր կէներ։ Նըյսը։

Նեքըրնուն ըսավ.— Ամենքդ ձեր դրվրն առեք ձերը քնացեք, ես չեմ կրնա քաղքե քաղաք էրթա։

Այդ մարթիք կերան, խմեցին, դրվրնին առան, էկան խըզեի-նին մանչուն՝ Մելքոնին քովը։ Հըրը՝ «Մելքո՛ն, դու գիտես, կամ մայ կամ աղատութուն· կէրթաս քառասուն հատ դրվը կառնես օր կենա[1] նույն գործին պարապինք»։ Մելքոնս կէրթա քառասուն հատ դրվը կառնե, քառասուն տյուկերով բեռ։ Քնաց բեռները բառցեց նեքըրնուն հետ, օր դուս քա ուրուշ քաղաք։ Քնաց կնկանը քով, օր մնաս բարով էնե.— Կնիկմարթ, սեր ու սրվդեդ չեմ կրնա անցնի, ինչըդ օտարութան ես կյընքըս դիմեմ։

Կնիկն ա վերուց թե.— Տիա իմ նկարս։— Նկարներն առավ ու դրվրնուն հետ շարունակեց քնաց։ Քնացին մութն ընկավ, մե տեղըմ դրվրները չոքեցուց, բեռներն իչուցին, սկսեցին իրանց ուտել խմելը։ Տեսան օր անթին մե չադրըրմ կպուցած է, վաճառական է։

Էդ վաճառականը նեքըրին ըսավ թե.— Էդ ախմախը վեվ էր օր քովըս չէկած՝ դրվրները թեքին տվեց։

---

1 Կենա, գենը — դարձյալ, վերստին, կրկին (Ծ. Բ.)։

Ծառան էկավ ըսավ թե.— Վե՞վ էս, ի՞նչ վաճառական ես, խրզեինը ըսավ՝ «Թող քովս քաշ»։

Աս մարթն հ՚ելավ քնաց քովը։

— Բարև քեզի։

— Աստծու բարին։ Հըբը, ինչ մարթ էիր, օր քովըս չէկար։ Արի, արի թալիամ նարդի խաղանք, տոր հաց ու ջուր, տոր սամավարը ըլլի։

Նշանածին նկարը բիրդան Մելքոնին միտքը ընկավ։ Բըզիրգընը էրկնցավ ու ըսավ.— Էդիկ իմ նշանածիս նկարն է, քեզի վե՞վ է տվե։

Իլլըճ չէղավ, Մելքոնն ըսավ.— Արի բրս բռնենք, էսիկ իմ նշանածիս նկարն է։

Բըզիրգընը նկարը տվեց ըսավ.— Ձին նստիմ կէրթամ իրեք հատ կփերեմ օր էդիկ իմ նշանածս է. թե սուտ էղավ՝ քառսուն դրվըն ու քառսուն նեքըրը քեզի կուտամ,— ըսավ բըզիրգընը։

Ասիկ ձին նստավ ու հ՚ելավ քնաց։ Քնաց մտավ Թրվեզ քաղաք, Օսեփին տունը գտավ, քնաց Մելքոնին տունը գտավ, դուռը ծեծեց. էսոր հարցուցին.— Վե՞վ էս դու։

— Ես էն վաճառականն եմ, օր Մելքոնին քովեն քուքամ, նամակ եմ փերե։

Աղախինը քնաց բանալու, Մելքոնին կնիկը չթողեց, ըսավ.— Այդի արեցեն աշե։

Աս մարթը արան օր ձեռքը կոխեց նամակը տալու էղավ, ախը դուս ցկեց օր նամակը տի տա, հրեց զոռով, դուռը բացվավ, էսիկ ընկավ նես։ Հարսն ու աղախինը զոպպաներն առան ու տվին գլխեն դարիվար, դուս ցկին ու դուռը ախեցին։ Ասիկ ընկավ Թրվեզու մեչ, էսան պըտրտավ, էնան պըտրտավ, նըյսը պզտի ախպուր գտավ, վրայի արունը լվաց։

Մեմա մե պառավ կնիկըմ քուքա, տեսնի կը, կսե.— Բըզիրգընն ջան, էդ ի՞նչ է էղե։

— Թըրկը տու, մա՚ըս, հըլ-հեքըթ այսման բանըմ։

— Արի էրթանք,— կըսե,—մեր տունը, իմ մարթս ֆոտոգրաֆչի է, առավոտ ես քեզի տանիմ կը էնոնց տունը։

Առավոտ պառավը հ՚ելավ մեկը չանթ, մեկը չարոխ հասավ Մելքոնենց տունը։ Դուռը թրխկըրտացուց, ըսավ.— Դուռը բաց, քուրոչս տխչիկ։

Քնաց տեսավ օր մե պառավըմ դուռը կըզարնե. բացին։

Էսիկ ըսավ.— Քուրոչս ախչիկ, ես հաչիութան տի էրթամ, ունեցած չունեցածս քեզի պիտի հանձնեմ։

— Փի, մորքուր ջան, փի մեր տունը թի։

— Թե աչող քնացի էկա՝ ապրանքս տու, թե չէ՝ ապրանքս քեզի հալալ ըլի։

Քնաց տուն, մե ուժեղ մուշամ տարավ, բըղիրդընին թրեց յաշիկին մեչը, ասլառաթը մեչը, իրեք աքոշկան առաչը։ Մուշան շալկեց ու տարավ Մելքոնին դուռը։

— Է հե՛չ, մորքուր շան, թի այդի դռանը էտտին։

Տանին թնեն կը օդան, վերտեղ օր Մելքոնին կնիկը կը կենար։ Տարավ օդան օր դրեց՝ պառավը քնաց, պիտի աչողութան էրթա, սև մութ էրթա։ Էսոնք սեղանը սարքեցին, հաց ուտելու վախտը բըղիրդընը յաշիկին մեչն նկարե կը։ Ադիկ մե նկարըմ էղավ։ Իրիկունը չայ խմած տեղը Մելքոնին կնկանը էլի նկարեց, էղավ էրկու նկար։ Մեմ ա քնաց կառավաթին առաչը հանվավ, պառկիր տի օրա, ետ դառցավ հայլուն աշեց, մեմ ա էդ վախտը նկարեց։ Մելքոնին կնիկը քնաց պառկավ։

Առավոտը լուսացավ, էս պառավը կրակի պես դուռը կռեց թե.— Ցամա՞ն, քուրոչս ախչիկ, տոր քնացի ֆուրղունները քնացել էին, յաշիկս տու էրթամ տուն։

Մուշան փերեց յաշիկը շալկել տվեց տարավ տուն։ Բըղիրդընին միչեն հանեց։

Էսիկ պառվին ըսավ.— Ահան քեզի ըուռըմ օսկի։— Ձին հեծավ քնաց։ Ձին նստավ քնաց Մելքոնին քովն, իչավ դըվընուն քով։— Ահան,— ըսավ,— իմ փերած նկարնիս։— Իրար քով թըրին նկարները, ըիրըդի նման։ Է՞, Մելքոնս տարվավ։ Քառսուն դըվը, քառսուն նեքրը, ինքն ա հետը ծառա տեի պիտի էրթար։ Այս մարթուն էղավ ութանասուն դըվը, ութանասուն նըքըր։ Հիմի քառսուն տարի, քառսուն մուշանուն մեծը բըրիդադիր էր, ըսավ.— Մելքո՞ն, քու հորըդ հացը շատ եմ կերե, ես ղաբուլ չեմ էնե էդ բանը։ Ես ետ կէրթամ, չեմ հ՞ուզե էդ բանը։

Թող էրթան էտոնք քաղքե քաղաք խոիթ[1] էնելու։

Խաբարը տանք էդ ծառային։

Էսիկ էկավ խըզեյքին դուռը ծեծեց։ Խըզեյքան օր դուռը բացեց՝ էսոր տեսավ, զարմացավ։

— Էս ի՞նչ խաբար էր։

---

1 Առևտուր (Ծ. Բ.)։

— Հըլ-հեքըթ, ասպես, ասպես, Մելքոնն ա դըվընները տարվավ քնաց։

Հեքըթը նորեն թըզրընա կը։

Հըպը.— Այսկան օսկի ամարաթ կուտամ,— ըսավ խանումը,— կէրթաս ղաթմ թաքավորի շորեր կառնես, ղաթըմ լըլի։

Տոր էդիկ քնաց էդ զաքազները տվեց, տեսնի կը օր շուխտըմ լավ ըյըրի[1] ձի կէրթան։ Ծառան ա տուն էկավ։

— Ծառա,— ըսավ,— ահան քեզի բուռըմ օսկի, քընա ատ ձիանը առ։

Ուրեմը, ձիանն ա առավ փերեց տուն։

— Քնե սառաֆին քով, շուխտըմ ըյըր շինել տուր ձիան համար։

Կանչեց ծառային թե ըսավ.— Ո՞ւրտեղ կէրթան հիմի։

Ծառան ըսավ.— Խոյ կէրթան։

Խանումն ըսավ.— Ո՞ւրտից էրթանք օր առաշն առնենք։

Ծառան ըսավ.— Տոր Ախըրքըլըկ, Ախլցխա, Բորշոմ էրթլուն, էստից Ծալկվա առաշը կառնենք։

Խանումը հաքավ թաքավորին, ծառան՝ լըլին շորերը։ Ծալկվա վրայեն Թիլվիզ իշան, քնացին թաքավորին դուռը. ծառային ըսավ.— Թաքավորին տեսնելու եմ էկե. թաքավորեն իզին առ օր տեսնիմ։

Քնաց թաքավորին քով։ Բարև տվեց, թե.— Ես նոր, երիտասարդ թաքավոր եմ, եկել եմ քեզի տեսնելու։

Լավ օր ծանոթացան, մտերիմ էղան, հար ու տղի պես իրան սըրը ինքը այտնեց։

Նոր էրթած թաքավորը էս էխտիար թաքավորին ըսավ.— Ի՞նչ կըլլի մե չորս հինդ օր թաքավորին ղեկը իմ ձեռքս տաս։

Էդ օրն ա բըզիրգընը ութանասուն դրվսվ, ութանասուն նեքըրով քուքա թաքավորին քաղաքը կը մտնի։ Էտոնց օրենք կա էղե բըզիրգընն օր թաքավորին քաղաքը կը մտնի, թաքավորին համար բոխչամ շեյ[2] կը փերե, օր թաքավորը թողնե առուտուր էնելու։

Բըզիրգընը կըսե.— Դու, Մելքոն, բրիգադիր մարթ էս, արի իսիկ առ էրթանք թաքավորին քով։

Կէրթան թաքավորին պալատը կը մտնին օրա, բոխչան կը թնեն թաքավորին սեղանին վրան։

Թաքավորը կըսե.— Աս ի՞նչ բան է, ի՞նչ փեշքըշ է։

Հըպը.— Թաքավորն ապրած կենա, փեշքըշ է։

---

1 Թամբ (Ծ Բ.)։

2 Գործվածքեղեն (Ծ. Բ.)։

Թաքավորը կըսե.— Աս աշխարը վեվ է տեսե օր դու ութանասուն դրվը, ութանասուն նեքրը ունիս։— Բեարուռ կէնե բըզիրգընին։ Թաքավորը կըսե.— Պատմե էզածը։

Մելքոնն հառաչ քուքա, կըսե.— Ես բըզիրգընի տղա էի... դըվընիս տարվա աս մարթուն, թաքավորը սաղ ըլի։— Բըզիրգընին ճիտը կը զարնեն, կըսեն.— Առաջ արի դու, Մելքոն, կէրթաս քու քառասուն դրվըդ, քառասուն նեքրրդ կառնես, էսոր քառասուն դրվըն ու քառասուն նեքրրը ձեռվին կուտաս, ճամփես կը տները։

Էխտիար թաքավորը մատը խածեց, զարմացավ, թե էս ի՞նչ դատ էղավ, էս ի՞նչ դատարան էղավ։

— Մելքոն, հինգ օր էստեղ առուտուր կէնես էտև կէրթաս հորդ քաղաքը՝ Թրվեզ, էսանը չմնաս։

Հինգ օրը կը թըմմի, էսոնք իրենց ձիաներով քուքան հասնին կը իոեն տները։ Քաղաք օր հասան, Մելքոնը իրեն հորը գրվընուն տեղը դրվընուն չոքեցուց, բեռները իջուց։ Ըսավ.— Տըղաք ջան, գրվընուն քիչըմ բան տվեք ուտելու օր էրթանք հաց ուտելու, ահան ես տուն կէրթամ։

Մելքոնը տուն քնաց, դուռը բացեց օր ի՞նչ տեսնի, թաքավորն ու լըլըն իրեն տունն են նստե իրենց զըլըղով[1]։ Զարմացավ Մելքոնը, ընկավ մտածմունքի մեջ։

Թաքավորն ըսավ.— Ա՛յ Մելքոն, ի՞նչ ես մոլըրե, առաջ չես քա։— Մելքոնն հառաչ էկավ։— Քու ի՞նչ բանըդ է քաղքե-քաղաք պըտրտիլը։— Նըյսը,— իսի լըլըն օր չըլլիր՝ դու հիմի օտով գլխով կորել էիր, ես է կորել էի։

Մելքոնն ըսավ.— Դո՞ւք ինչի կը կորցըվեիք։

— Ա՛յ մարթ, ախմա՛խ մարթ, ես քու կինըդ եմ, էսիկ է քու հորդ աղ ու հաց կերած ծառան էր, ես էկա քեզի ազատեցի։

Մեմ ա պառվին կանչել տվեց։ Քնացին տուն, ինչ կայես յաշիկ, մեչը ֆոտոապառաթ. պառվին կանչեն, ջարթ ու խուրթ կէնեն, ահա՛ն քեզի վաճառականին փերել, նկար հանել։

Մելքոնը կելլե ամմեն դրվըճու կըսե.— Բառցե՛ք բեռներդ ու հ՛ելեք ըրթ քնացեք, ես խանութ տի բանամ։

Խանութը կը բանա, կըմտնի խանութը։ Ծառային հարստություն, դրվը, օսկի կուտա, կըսե.— Աս բանի պատճառը դու էղար, թե չէ ես էնոր ձեռքը գերի տի մնայի։

---

1 Հագուստ (Ս. Բ.)։